

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ Ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Հրաչիկ Մեհրաբյանի

Ես՝ Հրաչիկ Մեհրաբյանս, ՀՀ Ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2019թ. նոյեմբերի 18-ին կնքված N 114 պայմանագրի համաձայն:

2019թ. նոյեմբերի 18-ից մինչև 2020թ. մայիսի 18-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության 2019 և 2020թթ. ծրագրերով ստուգումների կատարման աշխատանքները:

Մասնավորապես.


- ՀՀ Ֆինանսների նախարարի 2019թ. նոյեմբերի 21-ի թիվ 33-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2019թ. աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2019թ. նոյեմբերի 28-ին և ամփոփվել են 2020թ. հունվարի 21-ին:
- ՀՀ Ֆինանսների նախարարի 2020թ. մարտի 11-ի թիվ 3-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2020թ. աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2020թ. մարտի 16-ին և դեռևս ընթացքի մեջ են:

2. Մասնակցել եմ վերոգրյալ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:

3. Մասնակցել եմ ստուգման արդյունքներով կազմված ակտերի նախագծերի վերաբերյալ տնտեսվարողների կողմից ներկայացված առարկությունների քննարկումներին և դրանց արդյունքներով վարչության դիրքորոշման կազմման աշխատանքներին:

4. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության  
վարչության փորձագետ

 Հրաչիկ Մեհրաբյան